ի խմբագրութեան եւ
ի նոր հասցէն
կի ՓՈՂՈՑ № 12

ԲԺՇԿԱԿԱՆ

Ե. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Պրոֆ. Mathieu-ի օնդգական խանգարումների մասնագիտական կլինիկայից (ստամոքսի, աղիքի, լեարդի, երիկամունքի, էլերութեան, արեան զակաուութեան, անմատիզմի, արաբրա-օկիրեոզ, քրոնիկ. մալարիա)։
Էլեքտրաբուժական կաբինետ։
Ընդունելութիւնը երեկ. ժամը 5—7-ը։
Гаковская ул., № 3, բնակ. 18,
8188 Телеф. 576. 100—95

ԲԺԻՇԿ

Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆ

ՆԱԽԿԻՆ ԱՍԻՈՏԵՆՏ ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ

Մասնագէտ մանկաբարձութեան, կանանց հիւանդութիւնների, նրանց միջասեռական և վեներականախտերի («608» «914»). Էլեքտրաբուժումն արգանդի և ձուարանների խրոնիկական բորբոքումների։ Ամենայն օր, ժամը 5—7-ը երեկ., կիրակի օրերը առ. ժ. 10—11-ը։ Հասցէ՝ Օլգինեան փողոց, Մելիք-Ազարեանի տուն, № 3, բն. 12, հեռ. № 16—71. 1609 100—85

ՀՆՆԵՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ

Մեգից-ֆելդ. Ա. ԵՍԱՅԵԱՆԻ

Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրոնիքական օրիգերի, լանկրի, սիֆիլիսի (ներսրսկումն էրլիխի իսկական «914»-ի և «606»-ի հմուտ մասնագէտ բժշկի ձեռ), սեռական թուլութեան և այլ վեներական ցաւերի բժշկութիւն, նորագոյն մեթոդներով և էլեքտրականութիւն։ Կալի տակ օրսկումներ, լուսումներ, վերքի փաթաթումը, բանկա կազմել, ծաղկահատութիւն։ Մասնաժ ձեռքով և էլեքտրականութեամբ։ Վարսեցովի արձանի մոտ, Семеновская ул., № 9։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 4—6 ժամը մ ճալից յետոյ։ Կանանց 6—7-ը։
8194 100—76

ԲԺԻՇԿ

Մ. ԳՈԼԴՇՏԷՅՆ

Նախկին ռուսական բարձր է. Ռոտշիլդի անջի հիւանդութիւնների հիւանդանոցի և Ժընեւի համալսարանական կլինիկայի։

Ե Հ Ի

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԿՆՈՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ընդունելութիւնը ցերեկ. 8—11 ժ. և երեկ. 5—6-ը։ Նիկոլայևսկի փ. № 32։
1949 100—65

ԲԺԻՇԿ ԳԱԲՐԻԷԼ

Դ. ԲԱԲԱԼԵԱՆ

ՆԵՐՔԻՆ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ՋՂԱՑԻՆ հիւանդութիւններ։ ՕՋԱՄՈՒՏԻ ԵՒ ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ բուժումն։ Ցերեկայ ժ. 1—2-ը, և երեկ. ժ. 5—7 ա.։ Սոլոլակ, Գասկեիչ փող. № 6։ Զուսներների ընդունելութիւնը ձրի։ Հեռախօս
1950 13—37։ 100—62

ԲԺԻՇԿ

Գ. Ե. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Նախկին ռուսական Ժընեւի համալսարանի կլինիկաների և զրաֆ. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բուժարանի։

Ներքին և կանանց հիւանդութիւններ. մասնագէտ վենեռական (սիֆիլիս, ներսրսկումն «606»-ի և «914»-ի), միզասեռական (հիճ և սեռ orիպեր և նրա կոմպլիկացիոնները) և կաթի ցաւերի էլեքտրաբուժում։
Ընդունելութիւն ամեն օր, առ. ժամը 10-ից 1-ը, երեկ. 5-ից 7-ը, կանանց համար երեկ. 6-ից 8-ը։ Կիրակի օրերը ձրի ընդունելութիւն ժամը 12-ից 1-ը։
Ֆիքսէնայա, № 11։ 1955 100—58

✓ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ՊԱՏԻՐԱԿՆԵՐԸ ԵՒ ՎՐԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

—

Երեկ Կ. Պոլսի կոնֆերենցիայի հայ պատուիրակութիւնը Հայաստանի գործերի հաւատարմատար Ա. Զամալեանի մասնակցութեամբ խորհրդակցութիւն ունեցան Ն. Ժորդանիայի, Ե. Գեգեչկորիի և Ի. Մերքելիի հետ Անդրկովկասի կոնֆերանսի, հայ-վրացական յարաբերութիւնների և մի շարք յարակից խնդիրների շուրջը։ Խորհրդակցութիւնից այն տպաւորութիւնը ստացուեց, որ հայ-վրացական տարաձայնութիւնները կը լուծուեն միանգամայն համերաշխ և խաղաղ ճանապարհով։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ

—

Հայկական դիւանագիտական միսսիան տեղեկութիւն է ստացել, որ անգլիական հրամանատարութիւնը վրաց կառավարութեանն առաջարկել է դիւրութիւններ տալ, որ Բագուից Ճանկասուն վերադառնան տաճիկ զօրքերը։

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ԲԱԳԻՈՒՄ

—

Լուր ունենք, որ դաշնակիցների զօրքերը Նոյեմբերի 17-ին մտել են Բագու։

ԽԱԼԻԼ-ԲԷԵԸ ԱԽԱԼՑԽԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

—

Հաստատ աղբիւրից տեղեկացնում են մեզ, որ տաճիկ գործիչներից յայտնի Խալիլ-բէյը Ախալցխայի շրջանում է գտնուում և պատրաստութիւններ է տեսնում Ղարսի, Ախալցխայի ու դրանց կից «թրքական» շրջաններից Անդրկովկասի արևմտեան անկախ «հանրապետութիւն» ստեղծելու։

ՀՍԿԱՑԱԿԱՆ ՑՈՅՑԵՐ ԴԱՇՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

—

Լոնդոնում, Պարիզում և դաշնակիցների այլ քաղաքներում շարունակւում են ցոյցերը յաղթութեան առթիւ։ Պարիզում տեղի ունեցաւ հսկայական ցոյց՝ էլզաս-Լոթարինգիայի Ֆրանսիային միացման առթիւ։ Ցոյցին մասնակցում էին աւելի քան 250,000 մարդ։

ՖՐԱՆՍԻԱՆ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՊԱՐՊԻԱՆ

—

Գերմանիայի կողմից զինադադարի պայմանների գործադրումն ընթանում է արագ տեմպով։ Ֆրանսիական տերրիտորիան ամբողջովին դատարկւեց։ Գերմանացիները շտապով մաքրում են Բելգիան։ Ֆրանս-ամերիկեան զօրքերը հասան... (աղաւաղուած) Մեցի շրջանը։

ՌԱՑԽՈՏԱԳՆ ԱՐՁԱԿԻՈՒՄ Է ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Գերմանական դահլիճը յայտարարել է ռայխստագի նախագահ Ֆէյրենբախին. «Քաղաքական յեղափոխութեան հետևանքով, որ վերացրել է իմպերիալիստական ինստիտուտները, 1912 թ. ընտրուած ռայխստագը, ինչպէս և դաշնակցական խորհուրդը, չի կարող այլևս գոյութիւն ունենալ իբր օրէնսդիր օրգան։

(Գերմ. ժամուլի հազորդ.)

ԲՐԻՍՍԵԼԸ ԳՐԱՒԻԱՆ

—

Բելգիական զօրքերը գրաւեցին Բրիւսսելը։ Բելգիական պարլամենտը հաւանօրէն նոյեմ. 21-ին կը գումարուի Բրիւսսելում։

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ

—

Դաշնակիցները մտան Բուխարեստ։

ԼԵՀԵՐԸ ԳՐԱՒՈՒՄ ԵՆ ՊՈԶՆԱՆԸ

—

Պոզնան եկած լեհ սպաները քաղաքային ինքնավարութիւնից